ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ
(արտահերթ)

ք. Երևան **24.11.2020թ.**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (Ինստիտուտ) Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստն անցկացվեց առկա և հեռավար եղնակներով: Ինստիտուտի Գիտական խորհրդի նիստերի դահլիճից (ք. Երևան, Ալեք Մանուկյան 11) առկա եղանակով նիստին մանակցում էր Խորհրդի երկու անդամ, իսկ հեռավար եղանակով zoom հարթակով 13 հոգի: Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 15–ը: Գրանցման թերթիկը կցվում է:

Ապահովված էր նիստի քվորումը:

Խորհրդի նախագահը նիստի վարումը փոխանցեց խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանին:

Նիստն արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Անահիտ Ստեփանյանը:

Օրակարգ

1. 24.11.2020թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգի հաստատում:
2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթ հայտարարելու մասին որոշման ընդունում:
3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյան՝ ըստ նախապես պատվիրակման)

Խորհրդի անդամ Գ. Մամիկոնյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը:

Խորհրդի անդամ Արգիշտի Թամոյանը առաջարկեց օրակարգից հանել օրակարգի երկրորդ հարցի քննարկումը այն տարաժամկետելով 2021թ. հունվար ամսվա կես՝ պատճառաբանելով

ՀՀ–ում հայտարարված ռազմական դրությունը և COVID-19 համավարակով պայմանավորված արտակարգ դրությունը:

Ինստիտուտի իրավական ապահովման բաժնի ղեկավար Օ. Պետրոսյանը ներկայացրեց, որ «Ռազմական դրության իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով ռազմական դրության ժամանակ չի սահմանափակվում ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարություն տալը և դրա անցկացումը:

Խորհրդի նիստի վարող Գ. Մամիկոնյանն առաջարկեց հարցը դնել քվեարկության:

Օրակարգի երկրորդ հարցը դրվեց քվեարկության: Երկրորդ հարցն հաստատվեց միաձայն նիստին ներկա 15 անդամների կողմից: Օրակարգն ընդունվեց:

Անդամներին ներկայացվեց նաև Ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթի հայտարարության տեքստի նախագիծը: Հայտարարության տեքստի բովանդակությն վերաբերյալ չեղան առաջարկություններ կամ դիտողություններ: Առաջարկներ հնչեց հնարավորիս լայն լսարանի համար տարածել հայտարարությունը:

Իրավական ապահովման բաժնի ղեկավարը տեղեկացրեց, որ հայտարարությունը տարածվելու է Ինստիտուտի կայք էջում, ֆեյսբուքյան էջում, «Կրթություն» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերում, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կայք էջում և ֆեյսբուքյան էջում:

Խորհրդի նախագահ ***Ռոման Մուրադյան***

Խորհրդի քարտուղար ***Անահիտ Ստեփանյան***